

«ՀՈԳԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ԻՆՏԵՆՑԻԱ ՈՒ  
ՀԻՄՔ ՍՈՑԻՈԼՈԳԻԱՑԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ  
ՓՈՆԶԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ

Անահիտ Ջիջյան  
*Փիլիսոփայական գիտությունների թեկնածու  
Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ*

Սոցիալական աշխատանքն իր գործառնության ու ինքնահասկացման խնդրակարգում սոցիոլոգիայի հետ իր փոխառնչությունները որոշարկելու և վերջինիս տեսական հասկացության լատույցների և մեթոդների կիրառության հարցում ունեցել է և ունի ոչ միանշանակ ու նույնականորեն հաստատուն տեսակետ և իր փոխհարաբերակցության հետագա զարգացման հեռանկարի տեսանություն<sup>1</sup>: Ինչպես նշում է Նոել Տիմսը, 1920-30թթ. սոցիալական աշխատանքը և սոցիոլոգիան ունեցել են իրական, բայց և ապարդյուն հնարավորություն համատեղ մշակելու իրենց սկզբունքային փոխհարաբերակցության ձևը և ֆունկցիաները: Այդ տարիներին արտահայտված նշանակալի մտքերից մեկն է. «...շատ սերտ և ուղղակի փոխհարաբերություն կա սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի միջև: Այդ միայն սոցիոլոգների և սոցիալական աշխատողների միջև է, որ փոխհարաբերություն չկա, թերևս միայն բացասական»<sup>2</sup>: Մարդկանց կյանքում հաճախ **նորն իր գոյությունը որպես ուրույն է հաստատել փորձելով ժխտել այն, ինչի հետ և-կամ ինչում ինքը կարող է նույնացվել**, տեղի ունինաև սոցիալական աշխատանքի ու սոցիոլոգիայի փոխհարաբերակցությունում, և վկայությունն այդ մասին կարելի է նկատել ինչպես մասնագիտական գրականության մեջ, այնպես էլ սոցիալական աշխատանքի մասնագետների շրջանում՝ դեպի սոցիոլոգիան նրանց վերաբերմունքում, ինչն ամենևին էլ անսպասելի չէ նոր գիտակարգերի առաջացման սկզբնական փուլում: Այս խնդրի առնչությամբ նկատենք, որ ժխտումը որպես այդպիսին և սոսկ իրենով չի կարող գի-

<sup>1</sup>Այդ փոխհարաբերակցության պատմական ոչ-միագիծ ընթացքի, նաև իրական հնարավորությունների ու ակտուալացած դրսևորումների վերաբերյալ տե՛ս **Leonard P.**, *Sociologie in social work, Routledge & Kegan Paul, London, 1966.* **Heraud B. J.**, *Sociologie and social work. Perspectives and problems, Pergamon Press, Oxford, 1970.* և այլն:

<sup>2</sup>**Timms Noel**, *Foreword// in Heraud B. J.*, *Sociologie and social work. Perspectives and problems, Pergamon Press, Oxford, 1970, p. VII.*

տակարգի հիմնավորման ու հաստատման համար ադեկվատ հենք ստեղծել: Բ. Հերոդն իր աշխատությունում նույն այդ հարցի առնչությամբ գրում է. «Սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի մասնագիտական գործունեության դաշտերի միջև կապի թուլության մի պատճառը սոցիոլոգի գրադեցրած դերի բնույթին է վերաբերում»<sup>3</sup>: Սոցիոլոգի խնդրահարույց դերին հակառակ՝ Բ. Հերոդի տեսակետն այդ փոխհարաբերակցության պոտենցիայի և հեռանկարային զարգացման վերաբերյալ դրական է և իր աշխատության մեջ կատարված հետևություններով ու ներկայացված առաջարկներով կառուցողական: «Սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի միջև փոխհարաբերությունը, առնվազն պոտենցիալ, ամենաաերտ մեկն է, որ կարող է լինել սոցիալական գիտության և մասնագիտական պրակտիկայի միջև»<sup>4</sup>: Բ. Հերոդի երկում այդ սերտ կապը ցուցադրվում է նշելով տարբեր սոցիոլոգիական հասկացություններ, կառույցներ ու մեթոդներ, որոնք կարող են կիրառելիության հնարավոր նշանակալիություն ունենալ սոցիալական աշխատանքի գործառնության զանազան իրադրություններում՝ սոցիալական աշխատողի և խորհրդատուի փոխհարաբերության մեջ, ընտանիքում առկա հակադրություններում, կազմակերպության և հասարակության մեջ սոցիալական աշխատողի տեղի ու դերի խնդիրներում<sup>5</sup>: Իսկ ինչո՞վ է պայմանավորված սոցիոլոգիական տեսությունների՝ սոցիալական աշխատանքում ուղղակիորեն, անմիջականորեն կիրառելիության հարցում մասնագետների կողմից երբեմն շեշտված կերպով արտահայտվող սկզբունքային բնույթի ժխտական վերաբերմունքը: Ի՞նչ իրողություն է թաքնված արտաքին ու անսքող փաստականության կերպի մեջ անզամ նկատելի՝ ոչ սկզբունքորեն *բաց ու հաղորդակցական և նույնիսկ* ներքուստ ակտիվ ժխտական այդ վերաբերմունքի հիմքում: Ըստ մեր տեսակետի, էականորեն նշանակալի խնդիրների առկայություն կարելի է տեսնել ոչ թե միայն մեկի, այլ՝ հենց երկուսի դիրքերում: Նախ՝ ո՞րն է էականորեն այն նշանակալին, որ տեսանելի է «սոցիալական աշխատանք» կոչվող և իր փաստացի գոյությունում սոցիոլոգիայից իրեն զանազանող ու առանձնացնող՝ գործունեության ու գիտակարգի դիր-

<sup>3</sup>Heraud B. J., Sociologie and social work. Perspectives and problems, Pergamon Press, Oxford, 1970, p. 277.

<sup>4</sup>Նույն տեղում, էջ 271:

<sup>5</sup>Տե՛ս նույն տեղում:

քում: Սկզբունքորեն էական է այն, որ «սոցիալական աշխատանք» բներևույթը<sup>6</sup> նրա առարկայական տիրույթը և գործառնությունը, չի դիտվում որպես անհրաժեշտ ու բավարար, սպառիչ ու աղեկվատ կերպով ու չափով տրվելի, հասկացվելի ու մեկնաբանելի սոցիոլոգիայում մշակված ընդհանուր հասկացություններով ու տեսություններով: Սոցիալական աշխատանքի մասնագիտական շրջանակներում առկա վերոնշյալ ժխտողական վերաբերմունքում նկատելի է «սոցիալական աշխատանքի» առարկայի, հասկացությունների ու մեթոդների առանձնահատկության և սոցիոլոգիայի գիտական ավանդությունում մշակված հասկացությունների ու տեսությունների ուղղակիորեն միանշանակ կիրառելիության միջև խզումի ու ոչ աղեկվատության ընկալում, ուստի և սոցիոլոգիայի ներկա ինքնահասկացումից ու ըստ այդմ՝ կայացման մոդուսից առանձնացող «սոցիալական աշխատանքի» տեսության մշակման և կամ գիտակարգի կառուցման ակտուալ անհրաժեշտություն:

Իսկ որո՞նք են էականորեն նշանակալի այն խնդիրներն ու առանձնահատկությունները, որ տեսայնելի են սոցիոլոգիայի դիրքում: Նկատենք, որ սոցիոլոգիայի սկզբունքային դիրքորոշումն ու ակտուալացող վերաբերմունքը սոցիալական աշխատանքի նկատմամբ բնորոշելի է որպես տուլեռանստ: Ինչո՞վ է դա պայմանավորված: Սոցիոլոգիան բազմազբաղ գիտական գործունեություն է և իր հետազոտությունների ոլորտում ընդգրկում է սոցիալականորեն ու մշակութորեն նշանակալի ֆենոմենների հսկայածավալ բազմություն ու ամբողջություն, որում որպես մասնավոր բներևույթ ընկալելով «սոցիալական աշխատանքը», նրա որպես այդպիսին գոյության և ինքնահասկացման նկատմամբ չի ենթադրվում ու իրագործվում որևէ անհրաժեշտ, գուցե և նախընտրելի պիտոյականություն կամ դրանից ավել արդեն նույնիսկ բռնությամբ ստիպողական թելադրողականություն:

<sup>6</sup> Է. Հուսեյովի՝ ճանաչողական իրադրության ու հարաբերակցության մեջ միայն որոշարկելի և ուրեմն՝ իդեական կամ ոգեղեն բովանդակություն ունեցող «ֆենոմեն» հասկացությունն է՝ «ինքն իրեն ցուցանող երևույթ», այլ ոչ այնպիսի ֆենոմեն, որն իրենից անդին ունի նաև էություն, ինչպես ընդունված էր նախկինում: Հուսեյովյան այս հասկացությունը Մ. Հայդեգերի կողմից վերաիմաստավորվել է որպես ամենայն ճանաչողական իրադրությունից ու հարաբերակցությունից առաջ արդեն իսկ անհրաժեշտաբար գոյություն ունեցող՝ «գոյութնական ֆենոմեն», որը և հայերեն թարգմանելի է որպես «բներևույթ» կամ «ինքնբերևույթ», այսինքն՝ գոյություն ունեցող և հենց իր գոյությամբ ինքն իրեն ցուցանող երևույթ:

Այսպիսով, սոցիալական աշխատանքում նկատելի երբեմն նույնիսկ ակտիվ ժխտողական վերաբերմունքը սոցիոլոգիայի նկատմամբ պատասխան հակազդեցություն չէ սոցիոլոգիայի թելադրողական գործուն միջամտությանը, քանզի բացորոշ ձևակերպված ու հայտարարված այդպիսի դիրքորոշում ու նպատակային վերաբերմունք սոցիալական աշխատանքի նկատմամբ բացակայում է:

Սոցիոլոգիան գոյություն ունի տեսական և գործնական իր գործառնության երկվիասնությամբ, թեև առավել ընդգծված կերպով նրանում արտահայտված է տեսական բաղադրիչը՝ գործնականը ավանդաբար թողնելով էթիկային, իսկ այժմ հիմնորոշ չափով արդեն նաև տնտեսագիտությանը, իրավագիտությանն ու քաղաքագիտությանը: Նկատենք, որ այդկերպ՝ սոցիոլոգիան հոժարակամությամբ իրեն զրկում է *մարդու և հասարակության ինքնամարտությանն ու կատարելագործմանը ուղղվածությունն ու գործառնություն, բուն դիտավորությունն ու կատարումն ունեցող և դրանում անձն ու հասարակությունը ներկրթող գործնական իմաստասիրություն* կայացման իր որպիսությունից: Իրենում չներառելով մարդկային ինքնությանն ու կենսակերպին, հասարակության համակեցությանը սկզբունքորեն կենսաբարձ մարդասիրության և արդարության իդեալներով բարեկարգությանն ուղղորդված ներգործուն մասնակցությամբ իր կայացման ու հաստատման ամենաէական հնարավորությունը, սոցիոլոգիան ինքն իրեն զրկում է իր գոյությունն իմաստավորելու և իմաստացնելու գորունակ կոչումից ու նշանակությունից, կորցնելով ըստ իր կոչման անհրաժեշտ ու նախընտրելի մոդուսով կայանալու իր պոստենցիային ադեկվատությունը և չունենալով ինքն իր հետ նույնություն՝ կորցնում է հենց իր բուն իսկությունը՝ իրեն մատնելով անիսկական գոյության ու անինքնության:

Սոցիոլոգիան և՛ տեսական, և՛ էմպիրիկ իր կարգավիճակով այնպիսի գիտություն է, որում հստակորեն շեշտված է *գուտ ճանաչողական պոստենցիան ու գործառնությը*, ընդ որում, կիրառական սոցիոլոգիան իր բուն բովանդակությամբ նույնորոշելի է որպես ճանաչողական պոստենցիայի իրագործման էմպիրիկ մակարդակ, և նրա գոյության ժամանակակից դրսևորումները հաճախ նաև այնպիսին են, որ իրավամբ կարող են հասկացվել որպես ոչ սկզբունքորեն սոցիոլոգիայի իսկությունից բխող, այլ պրագմատիկ տարաբնույթ շահերով ու նպատակներով, դիտավորությամբ ու ֆիլտրով հայտարարված ու

շհայտարարված գործածություն: Սոցիոլոգիայի այսկերպ դրսևորված գործնական ֆունկցիան աղեկվատ չէ սոցիոլոգիայի ճշմարիտ պոտենցիային: Այսպիսով, բացահայտվում է զարմանալի մի իրավիճակ: Սոցիոլոգիայի գործնական պոտենցիան ամեննին էլ ներկայացված չէ նրա պրակտիկ կիրառական կերպի մեջ: Այդ դեպքում որտեղ կարելի է տեսնել սոցիոլոգիայի գործնական բաղադրիչի ներկայությունը: Նկատենք, որ սոցիոլոգիան իսկորեն գործնական իր պոտենցիայի ոչ լիովին գիտակցված ու աղեկվատ իրագործումն ունի ոչ թե ժամանակակից իր կիրառական կերպում, այլ սոցիոլոգիայում որպես **տեսական** ընկալվող իր բաղադրիչում: Այդպիսին է այն, երբ իր հետազոտությունների արդյունքում գիտականորեն հիմնավորությամբ ներկայացնում է մարդկային ինքնության, կենսակերպի, սոցիալական քաղաքականության ու կյանքի, կառուցվածքների ու գործառույթների **բարեկարգության** նախընտրելիորեն անհրաժեշտ ինտովացիայի հայեցակարգեր կամ տեսական ու գործնական առաջարկներ: Իր գոյության ընթացքում հայտնի տեսաբանների աշխատություններում, անշուշտ, իրագործելով ոչ միայն տեսական, այլև գործնական իր պոտենցիան, սոցիոլոգիան միշտ չէ ինքնահասկանում ու հետևողականորեն ամրագրում, որ ամենայն սոցիալական գիտություններ, որոնցում և՛ **սոցիալական աշխատանքն ու հենց ինքը՝ սոցիոլոգիան նույնպես գոյության են կոչված հասարակության կյանքում բարեկարգության հաստատման կարիքով և դիտավորությամբ:** Սոցիոլոգիան իր զուտ ճանաչողական բնությամբ **տեսականորեն ճանաչում ու բացահայտում է ճշմարտությունը** և այդչափ է սկզբունքորեն սահմանում իր գործունեության վերջնագիծը և իր համար սկզբունքորեն սահմանված չի տեսնում՝ **ճանաչել, ապա և գործել բարին** գործնական իր այդ կատարումով մարդկային կյանքի իրողություններում իրագործելով բարեկարգություն: Եզրակացնելով նկատենք, որ սոցիոլոգիայի գոյության իսկության դեռ այսչափ միայն բացորոշության պայմանում արդեն սոցիալական աշխատանքի կողմից սոցիոլոգիայի նկատմամբ ընկալողական վերաբերմունքը զգուշավոր է, և իր ուսումնասիրության ու գործունեության առարկայի ու խնդրակարգի առանձնահատկության նկատմամբ սոցիոլոգիայի պոտենցիայի, ակտուալացած կոնկրետ գոյության և գործառնության աղեկվատության հարցում նրա տարակույսն ու երբեմն սուր կերպով դրսևորվող ժխտողական դիրքորոշումը ունի հիմնավոր պատճառաբանվածություն:

Իր գոյության տեսական-ճանաչողական գործառնության մեջ ու կարգավիճակում **սոցիոլոգիան ուսումնասիրում է սոցիալական գոյը որպես այդպիսին և նույնիսկ սոցիալականորեն նշանակալի իրողություններն իրենց այդ նշանակալիության պոտենցիայով ու ակտուալացմամբ և բացահայտում ճշմարտությունը:** Սոցիոլոգիայի առավելապես տեսական, քան գործնական կողմնորոշումը, երբ իր հետազոտությունների արդյունքները, ի տարբերություն սոցիալական աշխատանքի, կամա թե ակամա անգոր, անկարող է ուղղակիորեն ու անմիջականորեն ի կատարումի բերել հասցեատեր խմբերի, համախմբությունների, կառուցվածքների ու հանրույթի և ողջ հասարակության նկատմամբ, չի կարող ադեկվատ լինել սոցիալական աշխատանքի բուն նպատակը հանդիսացող՝ կարիքավորության և դրա առնչությամբ նրա անելիքի հասկացման խնդրին: Սոցիալական աշխատանքը սկզբունքորեն իր պոտենցիայում և ակտուալացած գործառնության մեջ երկբնույթ է, ունի և՛ տեսական-հասկացողական, և՛ գործնական-աջակցողական միջամտության բաղադրատարրեր: Այն դիտավորություն ու կատարում ունի և՛ անձանց, խմբերի, համախմբությունների, հանրույթի կարիքավորության բացահայտման, և՛ աջակցության ուղիների ընտրության, մշակման-կատարելագործման ու բուն իրագործման խնդրակարգում: Սոցիալական աշխատանքի՝ առ սոցիոլոգիան վերաբերմունքում իր դերն ունի այն, որ սոցիոլոգիայի առավելապես տեսական գործառնությունում չի տեսնում իր ուսումնասիրության բուն առարկայի ու «խնդրո նյութ» սոցիալական ֆենոմենների՝ իրենց առանձնահատուկ գոյության **կարիքավորության** կերպի մեջ հասկացվածություն, ուստի և ադեկվատ հասկացություններով անվանում ու ընդգրկում: Մասնավորապես, սոցիոլոգիական հետազոտություններում կարող են լինել «սոցիալական խմբեր» կամ «սոցիալական համակարգեր ու ենթահամակարգեր» հասկացությունները և, այսպիսով, նկատի առնվել ու ընդգրկվել օրինակ՝ «երիտասարդություն», «ընտանիք», «տարեց միայնակներ», «դպրոցահասակ երեխաներ» խմբերը, սակայն **չներկայացվել ու քննության չառնվել այդ խմբերի՝ իրենց կարիքավորության մեջ գոյության առանձնահատկությամբ**, ուստի և արդյունքները կարող են լինել և ոչ ադեկվատ՝ ի համեմատ այն հետազոտության, երբ նույն այդ խմբերը արդեն որպես կարիքավոր տվյալ խումբ՝ ենթակա են լինում սոցիալական աշխատանքի քննությանն ու գործունեությանը:

Սոցիալական աշխատանքը կարողունակ է լինում սոցիոլոգիական հետազոտություններից ձեռքբերել իր խնդրո առարկայի և դիտավորության յուրակերպության տեսադաշտում անհրաժեշտորեն «թարգմանության» ենթակա և այս առումով դեռ միայն մասնավոր բնույթի, ոչ ամեննին ադեկվատ ու սպառիչ իմացություն ու տեղեկություններ: Սոցիալական աշխատանքը մշտապես կարիք է ունենում սոցիոլոգիայի հասկացությանին կառույցների մեթոդների ու հետազոտությունների, ըստ իր առարկայի ու խնդրակարգի առանձնահատկության, մշակման, կորրեկցիայի ու վերախմաստավորման:

Սոցիոլոգիան, ուսումնասիրելով սոցիալականորեն նշանակալի ֆենոմենի գոյությունն ու հենց այդ նշանակալիությունը և բացահայտելով իսկությունը, գոյություն ունի, մնում և կատարելագործվում է դեռ միայն զուտ ճանաչողական և, այսպիսով, հենց *տեսական* իր կոչումի ու գործառնության մեջ: Իսկ ինչպիսի՞ն կարող էր լինել սոցիոլոգիայի գոյության *գործնական* բաղադրիչը: Սոցիոլոգիան իր տեսական ու գործնական երկմիասնությամբ կոչված է ուսումնասիրել ու բացահայտել, որպես տեսական, ոչ միայն սոցիալականորեն կամ նույնիսկ մշակութորեն նշանակալի ֆենոմենների որպես այդպիսին գոյության իսկությունը, այլև, որպես նաև գործնական, այդ իրողությունների բուն պոտենցիան և ակտուալացումը՝ բարեկարգության միտող ու իրագործող իրենց իմաստով: Այնուամենայնիվ, նկատելի է, որ սոցիոլոգիան դեռ միայն ճանաչում, հասկանում ու մեկնողաբար բացահայտում է բարին, այլ ոչ թե գործում՝ ուղղակիորեն ու գործնականում աջակցելով ներանձնել ու կենսակերպել նույն այդ բարին մարդկային ինքնությունների կեցողության ու գոյակցության մեջ: Ի տարբերություն սոցիոլոգիայի դեռ միայն այսչափ գործնականության, սոցիալական աշխատանքը ոչ միայն հասկանում ու բացահայտում է իր խնդրո նյութ հանդիսացող «կարիքավորության» ֆենոմենի իսկությունն ու նրանց նկատմամբ բարին, այլև ուղղակիորեն գործում է անմիջական հաղորդակցությամբ տեղի ունեցող աջակցողական միջամտությամբ իր *սասարազես* մասնակցությունն իրագործելով նրանց կյանքում: Սոցիոլոգիայի գործնական բաղադրիչի որպիսության դեռ միայն այսչափ բացորոշումը տեսանել է տալիս սոցիալական աշխատանքի հետ սոցիոլոգիայի մերձավորությունը բացահայտող, ապա և միմյանց նկատմամբ բացությունն ու հաղորդակցականությունը հնարավորող էական առանձնահատկություն: Ուսումնա-

սիրելով մշակութորեն և սոցիալականորեն նշանակալի իրողությունները սոցիոլոգիան չունի<sup>6</sup>, արդյոք, իր բացության իսկությունը բացահայտող մեկ այլ առանձնահատկություն, որը, սահմանելով առարկայական տիրույթի առավել նեղ ընտրություն, քան այն, որն իրականացվում է սոսկ ճանաչողական հետաքրքրության բացությամբ, կարող էր առավել համապատասխան լինել նրա ուրույն առարկայական տիրույթին: Սոցիալական գիտության և հենց սոցիոլոգիայի իսկության բացորոշման համար հիմնարար նշանակություն ունի նկատել, որ բացի ճանաչողական հետաքրքրությունից, այն պէ՛տք է ունենա նաև **հոգածության** ինտենցիան: Սոցիոլոգիան ուսումնասիրում է բուն մարդկային իրողությունները, որոնք սկզբունքորեն առավել չափով են կարիքավորություն դրսևորում իրենց նկատմամբ հոգածության: Սոցիոլոգիայի մարդկային իրողությունների նկատմամբ հոգածության բացությունը, ըստ էության, առավել ուղղորդված, **որոնող, իմաստավորող, ընտրողական** ու նպատակային կազմակերպված **բացություն** է իր առարկայական տիրույթի նկատմամբ, քան զուտ ճանաչողական հետաքրքրությունը: Չուտ ճանաչողական հետաքրքրության բացությամբ սոցիոլոգիան ուսումնասիրում, հասկանում և բացահայտում է տվյալ ֆենոմենի որպիսությունը, իսկ հոգածությամբ ուղղորդված ու կազմակերպված իր բացությամբ կայացող ուսումնասիրությամբ ու հասկացմամբ բացորոշում է այդ որպիսության մեջ իսկությունն ու նախընտրելիորեն այդ իսկության մեջ հաստատող գոյության կերպն ու իմաստը և դրանից տարբերակում է այլակերպվածությունն ու դրան տանող գոյության կերպն ու անիմաստը: Եվ հենց հոգածությամբ ուղղորդված ու կազմակերպված բացությունն է, որ որոնում է բարեկարգության միտող իմաստը և դրան հասնելու հնարավորություն ընձեռող ու այն հաստատող իմաստությունը: Սոցիոլոգիայի տեսական ու արդեն նաև գործնական կատարումի այսկերպ ինքնահասկացումը սոցիալական աշխատանքի նկատմամբ առավել մերձավոր դիրքի և փոխադարձ բացության ու հաղորդակցականության մեջ է հաստատում նրա և սկզբունքային պոտենցիան, և՛ նախընտրելի ներկայությունը մարդկային կյանքում: Ի մի բերելով վերոշարադրյալը, կարող ենք ասել, որ սոցիոլոգիան իր իսկական գոյության մեջ, ըստ էության, ուսումնասիրելով բոլոր այն ֆենոմենները, որոնք ունեն մշակութային և այսկերպ արդեն նաև սոցիալական նշանակալիություն, և հոգածությամբ ուղղորդված իր բացության տեսադաշտում

(հորիզոնում) բացահայտելով այդ ֆենոմենների գոյության իսկությունն ու բարեկարգության միտող իմաստը, նմանակերպություն կարող է տեսնել սոցիալական աշխատանքի հետ: Ահավասիկ, սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի իրենց կոչմանը համապատասխան լինելությամբ բացահայտվեց նրանց նույնահիմն ընտանության հիմք, բացության և հաղորդակցականության հնարավորություն և երկուսին իրենց ինքնության մեջ կայացնող ու կատարելագործող ներքին միտումով հանդերձ՝ ընդհանրություն ցուցանող էականորեն նշանակալի առանձնահատկություններ:

Իհարկե, կան նաև սոցիոլոգիան և սոցիալական աշխատանքը զանազանող, տարբերակիչ առանձնահատկություններ նույնպես, որոնցից կկամենայի նշել երկուսը: Առաջին՝ նկատելի է, որ սոցիալական աշխատանքը, բացահայտելով սոցիալականորեն նշանակալի կարիքավորությունը և իրագործելով բարեկարգության դիտավորությամբ իր աջակցական մասնակցությունը, կարող է և՛ անմիջականորեն, և՛ միջնորդավորված իր գործունեությունն արդյունավորել անձի, խմբի, հանրության ու հասարակության կյանքում: Իսկ սոցիոլոգիայի ձեռք բերած գիտական արդյունքը՝ կարող է իր վերաբերությունը գտնել անձանց, խմբերի, հանրության կյանքում սկզբունքորեն միջնորդավորված կերպով՝ հասարակության կառուցվածքների միջոցով, դրանցում փոփոխությունների իրագործմամբ: Երկրորդ՝ սոցիոլոգիան, իր իսկությանը համապատասխան, սկզբունքորեն կարող է գոյություն ունենալ բոլոր հասարակություններում, նաև այնպիսի, որոնցում համեմատաբար քիչ է հոգածությունը անձանց, խմբերի, համախմբությունների նկատմամբ: Այն կարող է իր բուն իսկության մասնակի ակտուալացմամբ՝ գոյություն ունենալ անգամ բոնությամբ առավել և հոգածությամբ նվազ հասարակություններում, եթե միայն կառավարող ավագանին չի այլակերպում նրա տվյալները, թաքցնելու համար այլևայլ շահեր և հայտնելու միայն իր տեսակետների ու գործունեության նկատմամբ հասարակության մեջ հավանություն արարող և սոսկ դրան միտված խեղաթյուրված տեղեկություններ ու իմացություն: Իսկ սոցիալական աշխատանքի գոյությունն արդեն իսկ խոսում է հասարակության կյանքում կարիքավորության նկատմամբ հոգածության, կարեկցանքի, աջակցության և, իհարկե, այս բոլորի հիմքում հոգևոր սիրո ներկայության մասին, որ և հասարակության մշակություններն առավել զարգացած, բարոյականության միտող քաղաքա-

կիրթ կայացածությունն է հաստատում և հասկանալի ու բացահայտ դարձնում:

Սոցիոլոգիան տեսական ու գործնական երկմիասնությամբ գործառնող իր գոյությամբ ձեռք է բերում սոցիալական կյանքում **ճշմարտության ու բարու** իմացություն և հենց այդկերպ իրագործում հասարակության կյանքում և կառուցվածքներում բացահայտվող բարեկարգության կարիքավորությանն ադեկվատ տեսական աջակցություն: Իսկ **սոցիալական աշխատանքը լրացնում է սոցիոլոգիային և համալրում այդ աջակցությունը հասարակության կյանքում**, տեսական ու նաև գործնական իր գործառնությամբ: Այս գիտակարգերի երկուստեք մասնակցությամբ հնարավոր է դառնում տեսականի ու գործնականի երկմիասնությամբ իրագործելի **սոցիալական կյանքի իմաստասիրությունը** և մարդկային կյանքում բացահայտվող բարեկարգության կարիքավորության նկատմամբ նպաստավոր, սատարող աջակցությունը: Սոցիալական աշխատանքի և սոցիոլոգիայի՝ միմյանց նկատմամբ փոխբացությամբ տեսնվող ու կայացող հարաբերակցությունը հնարավոր է դարձնում **խզորեն հիմնային հաղորդակցականություն և նույնիսկ փոխլրացականություն** սոցիալական գոյն իմաստասիրող նրանց տեսական ու գործնական բաղադրատարբերում՝ և՛ դիտավորության, և՛ կատարումի խնդրակարգերում:

## ԱՄՓՈՓՈՒՄ

Սոցիալական գիտությունները և կոնկրետորեն՝ սոցիոլոգիան ու սոցիալական աշխատանքը, լինելով գիտություններ մարդկային իրողությունների վերաբերյալ, իրենց գոյության հիմնորոշ գործոն ունեն «տեսական-ճանաչողական հետաքրքրությունը» և «գործնական հոգացությունը»՝ որպես իրենց ուսումնասիրության և բուն գործունեության օբյեկտի նկատմամբ հիմնարար ինտենցիա: Հռոպածում ներկայացված են սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի երկմիասնական (տեսական ու գործնական) գոյության որոշ հանրահատկություններ ու առանձնահատկություններ, որոնց հասկացումը բացահայտում է այդ երկուսի միջև հնարավոր փոխլրացնող փոխհարաբերությունների զարգացման հորիզոն, սոցիալական գիտությունների միասնության անհրաժեշտ ու նախընտրելի հեռանկարով սոցիալական բարեկարգության հասնելու համար:

**Բանալի բառեր**-կարիք, հոգածություն, բարեկարգություն,

## «ПРИЗРЕНИЕ» КАК УНИВЕРСАЛЬНАЯ ИНТЕНЦИЯ И ОСНОВА КОММУНИКАТИВНОСТИ СОЦИОЛОГИИ И СОЦИАЛЬНОЙ РАБОТЫ

Анаит Джиджян

*Кандидат философских наук.*

*Армянский Государственный*

*Педагогический Университет им. Х. Абовяна*

### РЕЗЮМЕ

Социальные науки вообще и конкретно социология и социальная работа, будучи науками о человеческих реалиях, основополагающими факторами своего бытия имеют как «теоретико-познавательный интерес», так и «признание» в качестве фундаментальных интенций своего отношения к объекту исследования и деяния. В статье представлены некоторые общие и особенные свойства двуединого (теоретического и практического) бытия социологии и социальной работы, понимание которых раскрывает горизонт развития взаимодополняющих взаимоотношений между ними в необходимой и предпочтительной перспективе единства социальных наук в достижении социального благоустройства.

**Ключевые слова:** нужда, признание, социология, принцип, работа, метод, функция.

## "CHARITY" AS THE UNIVERSAL INTENSION AND BASE FOR COMMUNICATION IN SOCIOLOGY AND SOCIAL WORK

Anahit Jijyan

*Candidate of Philosophy*

*Armenian State Pedagogical University after Kh. Abovyan*

Social sciences in general and sociology and social work in particular, being sciences of human realities, as the grounding agents of their existence have both "the theoretical-cognitive interest" and the "charity" as the fundamental intensions of their relation to the objects of their investigation and action. In this article are presented some general and particular features of twofold (theoretical and practical) unity of sociology and social work, the understanding of which opens the horizon of development of their complementary interrelation in the necessary and preferable perspective of the unity of social sciences in reaching the goal of social improvement.

**Key words:** need, charity, improvement, sociology, principle, work, method. function.